

ԱՐԵՒԵԼԵՆ ԴԱՐ

ԱՅԼԱՐԱՆԱԿԱՆ

Ամիսը երկու անգամ կը հրատարակուի 15ին եւ վերջին :
Վեցամսեայ գինն է 40 դանեկան կանխիկ :
Մեկ քիւի՞ն
Ուզողը կրնայ ստորագրուիլ, "Կ. Պոլիս Մերձանը Պ. Յ.
Մարգարեանի գրատունը :
Գրգար աղասի խանը վերի յարկը Թ. Խմբագրի սենեակը :
Ստորագրութիւնը Յուլիս 15 առգի քիւեն կսկսուի :

Ո եւ իցէ Ազգային Հափաւոր ծանուցում մը ձրի կը հրա-
տարակուի :
Անհնական լաճու մը համար ըլլալու ծանուցումներուն
համեմատաբար սակարկութիւն կըլլայ :
Իւր հպատակիւն յարմար եկած ստորագրեալ ճամակներն
ու յօդուածները կընդունուին, եւ ուզեն հե առողա-
նաճով ալ կը հրատարակուին :

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ 1860.

ԹԻԻ 11



Ի դառնակսկիծ Մահ Մեծապատիւ Ազգասէր և բարեպաշտօն
Խօրասանճեան Պետրոս Ամիրայի, որ փոխեցաւ յԱտի կենաց Յա-
մի Տեառն 1860 Դեկտեմբեր 10 յերեկոյի Հաբաթուն, ՚ի սուգ և
յանմխիթարութիւն՝ իւր Ազնուատոհմ զարմին և ընտանեաց, և Հա-
մայն Ազգիս Հայոց : Եւ Նորին Մեծապատուութեան յուղարկաւո-
րութիւնն կատարեցաւ մեծաւ և շքեղ հանդիսիւ յաւուրն Կիւրակէի
՚ի Բերա և ՚ի Միջագիւղ :

ԵՐԿՆԱԻՈՐԻՆ Է ԱՅՍ ՎՃԻՈՒ
ՄԱՂ՝ ԱՄԵՆԻՑ ՃԱԿՍՏԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ ՄԸ

Ներելն թող լինի մեզ այս անգամ հետեւ
եալ Ազգային Խորհրդածութիւնը ընելու Ազ-
գին մէկ միլիոն դահեկանի մօտ ունեցած պարտ-
էն Լուսոր, զոր Մասիս պատուական լրագրոյն

457 թուով արդէն յիշեալ պարտքին վրայ տե-
ղեկութիւն տրուած է :

Այս տեղեկութիւնը որքան ճշմարիտ է՝
նոյնչափ ալ ճշմարիտ Հայերուն ուշադրու-

Թեանը արժանի իրողութիւն մըն է. ըստ որում այս Ազգային պարտքը ուրիշ բան մը չէ՝ եթէ ոչ ամեն մէկ Հայու պարտքը, հետեւաբար ըսել է որ ամեն Հայ ինքզինքը պատասխանատու ճանչնալու է այս պարտքին՝ որ իւր Ազգին վրայ ծանրացած է, և հաւանական է որ աւելի ծանրանայ, և Ազգային հաւասարակշռութիւնը կորսնցունէ:

Ազգ մը չեկայ որ պարտք չունենայ, պարտք ունենալը ամօթ չէ, բայց իր պարտքը վճարելու անկարող Ազգ մըն ալ Ազգ կոչուելու արժանի չէ. հետեւաբար եթէ մեր Ազգն ալ իր այս պարտքը վճարելու չի փութայ կամ տնտեսայ քիչ ժամանակէն պատուաւոր Ազգ մը չի ճանչցուելու դժնդակ կացութեան մը ենթակայ կ'ըլլայ:

Արովհետեւ իր անդամները համեմատաբար այնքան պատիւ կ'ունենան՝ որքան որ իրենց Ազգը կ'ունենայ: Ահա այս ճշմարիտ սկզբունքները աշուրներսուս առջև դնելով՝ ինքզինքնիս պէտք է որ մեծ պարտականութեան մը ներքեւ ճանչնամք, և փութամք ժամ մը առաջ սա ջնջին գումարը ճարելու, և ինքզինքնիս այս պարտքէն ազատելու:

Յիրաւի թէև Ազգային Սահմանադրութեան վերաբերեալ խնդիր մըն է այս, և մենք ոչ երբեք արժանաւորութիւն մը ունինք անոր Ազգասէր անդամներուն որ և է խորհուրդ մը տալու, բայց և այնպէս իրը Հայ ներքին յաւակցութիւններէն ստիպեալ մեր մասնորական կարողութեան համեմատ՝ այս պարտքէն խաղտելու եղանակ մըն ալ մենք ներկայացընեմք Ազգային կառավարութեան, որ եթէ արժան դատուի՝ ի գործ դրուի:

Ըսելքնիս ըսեմէս առաջ վայրկեան մը մըտադրութիւննիս դարձընեմք Ազգային կառավարութեան այն որոշման վրայ, որով Ազգը իւր այս պարտքէն պիտի ազատի:

Պարտք ընելով պարտք տալը՝ պարտքէ ազատիլ չէ, հետեւաբար եթէ Արուստաղեմայ սնտուկէն Ազգը փոխ առած այս պարտքը վճարելով պարտքէ ազատած չըլլար, պարտքը միշտ պարտք է, որու կուղէ թող ըլլայ, և տարբերութիւն մը չի կրնար ըլլալ պարտքին պարտատիրացը տարբերութիւնը: Բանը պարտատէրը փոխելու վրայ չէ, պարտքէ ազատիլն է:

Ազգը Արուստաղեմայ սնտուկէն փոխ առած այս պարտքը վճարելով ուրիշ բան մը ըրած չըլ-

լար, եթէ ոչ լոկ պարտատէրը փոխած, և հետեւաբար պարտքը պարտք կը մնայ, և Ազգը պարտքէ խաղտած չի համարուիր, պէտք է որ Ազգը հիմէն պարտքէ ազատի, ոչ թէ իր պարտատէրը փոխէ, ըստ որում խնդիրը պարտքէ ազատելու վրայ է, ոչ թէ պարտատէրի վրայ: Ուրեմն հարկ կ'ըլլայ որ Ազգային կառավարութիւնը այս մասին այնպիսի միջոց մըն ալ ձեռք առնելու է որ Ազգը բոլորովին պարտքէ ազատի, և ոչ թէ պարտատէրը կամ պարտքին տեղը փոխէ:

Խորհիլ արժան է նաեւ թէ՛ քանի որ Ազգը տարուէ տարի 120 հազար դահեկան կրնա զուէր Արուստաղեմայ Ս. Աթոռէն՝ տակաւին այսչափ պարտք կունենայ, ուստի յուսարի չէ՝ որ եթէ յիշեալ Ազգային մուտքէն տարուէ տարի 30 հազար դահեկան պակսեցընելով Ազգը ևս առաւել պարտքի տակ պիտի խնայ, մէկ կողմէն տարուէ տարի յիշեալ պարտքը վճարած ժամանակը՝ միւս կողմէն նոյնքան տարուէ տարի պարտք պիտի ընէ Բայց Ազգային կառավարութիւնը տպաւնի յաջողութեանց յուսալով ուրիշ բան մը ըրած չըլլար՝ եթէ ոչ սա առաւելին դէմ որ կ'ընէ «սպառնալիք» մը խորհել ~~Առաւել կը խնդրեմք Ազգային~~

*Այս խօսքերով ըսել չենք ուզեր քե Ազգային կառավարութեան այս մասին քրած արդի որոշումը ամենատեղից եւ կամ բոլորովին անօգուտ որոշում մըն է, քան իցի, այլ յաւետ առ ժամանակեայ բնութեան է. օգտակար որոշում մը կրնայ սեպտի, եթէ գործադրութիւնը շտապաւ ըլլայ: Բայց եւ այնպէս (իմեպէս ըսինք ու կրնանք) յայտնի է քե այս կերպ որոշում մը (ըստ կարծեաց մերոց) այս պարտքին Ազգին բովանդակութեանը մեջէն հիմնովին անհետանալուն մասամբ իւր չի կրնար ծառայել, ըստ որում քե Ազգային բարեջան կառավարութեան եւ քե մեր նպատակը, իյծը, ջանքն ու փափաքը՝ Ազգը այս պարտքէն բոլորովին ազատել է: Ուրեմն ասով հարկ կ'ըլլայ նաեւ որ Ազգին խոնական անհրկեղ այս մասին մեզի հետ ի բարին խորհելով, ի բարին կատարուելուն ջանացող ըլլան, այսինքն (պարզապէս ըսելով) Երուսաղեմայ Ս. Աթոռէն — փոխառութիւն պիտի ըլլայ, կամ եղաւ — ըսելներով ճանգիստ սըրտով, հանդարտութեամբ, կեցած ինքզինքնին այս պարտքէն խաղտած չի համարին, այլ Ազգային կառավարութեան այս մասին քրած այժմեան որոշումը միայն (ներկայիս) Ազգին պահ մը շուրջ առնելուն պատճառ մը համարելով, ապագային այս պարտքը Ազգին միայն ամեն կերպիս ջնջուելուն վրայ յօր առաջարկուած ու որոշուած եղանակներուն ընդունուիլը ինքզինքնին անհրաժարելի կերպիս պարտաւոր ճանցնան: Ահա այս է մեր խորհրդածելուն նպատակը, եւ ասկէ ետքն ալ անոր միայն պիտի ըլլան մեր յորդոհանքներն ու օտարութիւն:

կառավարութենէ որ բարեհաճի այս մասին մէջ աւելի օգտակար եղանակի մը դիմելու, որով Ազգը կարենայ բոլորովին պարտքէ ազատիլ:

Մեր կողմէն ներկայացուելիք եղանակը ուրիշ բան մը չէ, այլ միայն նուիրական ու ազատ ստորագրութիւն մը բանալ Մայրաքաղաքիս Հայ հասարակութեան մէջ. (բացի Ազգին այժմեան ստիպողական ծախքերը հոգալու համար ազգին երեւելիներէն հաւաքուելու գումարէն և պարտաւորական տուրքէն, զոր Ազգային կառավարութիւնը սահմանեց նոյեմբեր 4 ուրբաթ օրուան նիստին մէջ). որով ամեն Հայ քստ իւր կարողութեան նուիրէ իւր լուծման, Ազգը՝ կամ լաւ ևս է ըսել ինքնիքը հնացեալ պարտքէ մը կատարելապէս ազատելու համար:

Հա հոս է այն կետը ուր պիտի կարենան ճանչցուիլ նախնի Հայոց հարազատ զաւկները ուստի ով որ ճշմարիտ Հայ է, ու ճշմարտապէս կը սիրէ իւր Ազգը՝ թող ոչ թէ իւր կեանքը, հողին, արււնը և սիրելիները նուիրէ այս Ազգային պարտքին, այլ լոկ իւր ստակէն փոքրիկ մաս մը: Արեւմտեք արդեօք առանց ճանձնալու պարծենալ Հայ բլախուս վրայ՝ եթէ այս պարագայիս մէջ այսպիսի մէկ ջնջին ձեռնտուութիւն մը չընեմք մեր սիրելի Ազգին: Եթէ նախնի Հայերը սիրով ու քաջաբար կը նետուէին պատերազմի ահարկու դաշտը՝ ի սէր Հայրենեաց զոհուելու, հապա մենք արդի Հայերս ի՞նչ երեսով կրնամք ինքզինքնիս Հայ կոչել, եթէ այժմ իսէրն Ազգին դժկամակիմք զոհել մեր կենաց հետ անհունապէս անարժան համեմատուելու զոհ մը... զոհածը՝ որ զոհ ընողը անգամ չի պիտի կարենայ գգալ: Արդեօք այս մասիս մէջ Ազգային իգական սեռը չի՞ պիտի նմանին այն նախնի հարսերուն՝ որոնք իրենց բեհեզներուն հետ ի միասին իրենց սիրելիներն անգամ չէին խնայեր մահուան դաշտը խրկելու, և անով իրենց կը մնար մի միայն մը խիթարութիւն, իրենց նուիրական պարտքը կատարելին, և այլն, և այլն:

Իսկ նուիրական ստորագրութեան եղանակը:

Ներք. քանի որ համայն Ազգին սրտին մէջ, այս օրուան օրս (քաղաքականութեան մասին) կատարելութեանց հասնելու սաստիկ փոքր ու եռանդ մը սփռուած կը տեսնեմք...: Եւ ի հարկէ բովանդակ ժողովուրդի մը կատարելութիւններէն մէկն ալ իւր սեպհական Ազգին վրայ օրինաւոր կերպիւ եղած ու ծանրացած նիքալիս պարտքերն պարտ լաւ ծին համարեալ, զայն ժամանակին առանց դանդաղելու եւ առանց դժկամակելու հատուցանելու, եւ այնպէս Ազգը պարտքէն, զինքն ալ պարտաւորութենէ ազատելն է:

կին վրայ գալով ըսելիքնիս սա է որ ահա մենք և մեր տասն ընկերները այս օրուքնէ պատրաստ եմք, եթէ Ազգային կառավարութիւնը ընդունիլ բարեհաճի, մինչև վեց ամիս քսան դահեկան ամսական տալու, և ահա մեզի պէս թող ընեն ամեն Հայ իրենց վիճակը մեր վիճակին հետ համեմատելով, այն ատեն կը տեսնեմք որ Ազգն ալ յիշեալ հինցած պարտքէն ամենայն կերպիւ կազատի:

Բայց չեմք մոռնար յիշել հոս որ Հայ հասարակութիւնը այս խնդրոյն մէջ Ազգային արդի կառավարութենէ պահանջում մը ունի, և այն է իմանալ թէ ինչպէս եղած է որ Ազգը այս ծանր պարտքին ներքեւ ինկած է, Ազգային երեւմտական սնտուկն է պատճառ, թէ չէ մասնաւոր անձանց շահը: Ի՞նչ էր մինչև հիմայ Ազգային երեւմտական հաշիւը, և ինչ պիտի ըլլայ ասկէ վերջը: Եթէ Ազգային այս պարտքը երեւմտական սնտուկին անհաւասարութեան պատճառով եղած է՝ պիտի կարենայ Ազգային կառավարութիւնը վստահեցնել հասարակութիւնը որ յիշեալ երեւմտական անհաւասարութիւնը այժմ ալ կարգադրուած է, կամ թէ չուտով պիտի կարգադրուի: Իսկ եթէ յիշեալ պարտքը յառաջ եկած է մասնաւորաց անձնական շահուն համար նէ՝ պիտի ձեռք գալնէ Ազգային կառավարութիւնը նոյն անձանցմէ հաշիւ պահանջելու: ու անոնց վրայ անցած Ազգին ընդհանուրին իրաւունքը անգը դարձնելու համար զանոնք ստիպելու...:

Եթէ Ազգային բարեջան կառավարութիւնը զոհ ընէ զհասարակութիւնը այս պահանջ մանց համեմատ (ինչպէս որ անտարակոյս եմք ընելուն) թող ամեն կերպիւ ինքն ալ վստահ ըլլայ, որ Ազգին եռանդուն երիտասարդաց խումբը իւր բոլոր կարողութեամբ միաբան աւան ճիգերնին կը թափեն Ազգին համար որ և իցէ ծառայութիւն մը ընելու: Իսկ եթէ (սրբոյ ցաւօք կ'ըսեմք) որ Ազգային կառավարութիւնը այս բաներուն զանցառութիւն ընէ (որ չեմք յուսար) կարծեմք չի կրնար ու ելցէ նպատակի մը հասնելու, ըստ որում Հայ հասարակութիւնը ալ չուզեր անտեղեակ մնալ Ազգին թէ ներքին և թէ արտաքին, անցեալ և ներկայ վիճակին մանաւանդ Ազգային երեւմտական ընթացքին վրայ: զոր ամեն ատեն իւր մանալն ու քննելը իրենց անհրաժեշտ իրաւունքն է, և այս իրաւունքէն կամուռ չեն ուզեր զրկուիլ:

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Հ Ա Յ

Տես թիւ 10.

Ի՞նչ հպարտ կրից արձագանք...

Կամէ՞ որ եռօրիսն կորսուեր...

Ժողիքի, Հայհոյական, անհամար եւ պառլի...

(տեսնել):

Իսկ թողումը մարդկային պաշտօնը թիւն
ները և դատողութիւնները ազատ, ինչպէս որ
իրօք ալ են, և մենք դառնաւ մեր էական
խորհրդածութեան ընթացքին, ձեռք զարնեմք
ուշափութեամբ քննելու մեր երրորդ դիտո
ղութիւնը՝ որ էր անկրօնութեան և անասու
ութեան սպրդիլը Հայոց որդիներու սըր
տերուն մէջ, և զանոնք անպայաքա՛ն հեռա
ցրեմք Քրիստոնէական քաղցր սկզբունքներէն:

Այն բարեգութ Նրկիներն մարդկային սե
ռին շնորհած մէկ հատիկ միւլթարական ճշմա
րիտ ապաւինութենէն. Հրեշտակները՝ շուր
բեցնող, միանգամայն հիացմամբ լեցունող կը
բօնքեն. ո՛հ քանի դառն է այն պաշտօնը որ
ճշմարիտ Հայ մը անպատճառ իր սրտին մէջ կը
կրէ, տեսնելով իւր արիւնակից Նղբայրները որ
յսօր շտապեալով ունայնութեան չաստուածու
հիին հրապուրանացը անպայաքա՛ն կը հեռա
նան իրենց Փրկչին խաչին ոտքէն, ուրկէջ քիչ
մը առաջ Ասիական և Աւրոպական հզօր բար
բարոյութիւնները իրենց պապերը չի կրցան բաժ
նել. և որ հիմայ առանց բռնութեան ա
նոնց թռնները կը թողուն այն սրբազան տեղը
ուր ամեն մեղաւորաց վրայ Քրիստոսի քաւա
րաւ արիւնը կը հոսի, և զանոնք երանելի կրնէ:
Ճշմարիտ Հայ մը կրնայ հոս անտարբեր մնալ,
և չաղսդակել անոնց ետեւէն «կեցի՛ք ո՛յսօր
տակեալ թշուառականներ, ունայնութեանց պո
հեր, ապերախտ որդիներ կեցի՛ք, ո՛ւր կերթաք,
կամ ձեր քայլերը դէպ ՚ի ո՛ւր կը շտկէք. ետ
դարձէք, ետ դարձէք, կորուստը ձեր առջին է,
ու գերեզմանը ոտքերնուդ տակը»: Ի՛նչ անիծ
եալ ըլլայ այն օրը երբ Հայոց Ազգը լսեց արդի
Պապականութեան և Բրթթէսթանդութեան
ձայնը, ըստ որում ասոնց ձայնը Հայոց Ազգին
սա ներկայ արտասուաց արժանի կացութեան
ենթակայ ըրաւ, տակնուվրայ ընելով անոր որդ
ւոյնը Արօնական դադարաւորները և զբացումնե

րը, շուարեցնելով զանոնք իրենց հաւաքէն,
խախտելով անոնց սրտերուն մէջն անմեղ ապա
ւինութիւնը Քրիստոնէական պարզ սկզբուն
քին վրայ, հարածելով անոնց անկեղծութիւնը և
հիմնովին կործանելով շատերուն Քրիստոնէու
թիւնը և Աստուածապաշտութիւնը: Իսկ թո
ղումը մենք զանոնք արդար Արարչին իրենց պա
տասխանը տալու, և դառնալով նկատելու թէ՛
Ազգերնու մէջ որո՞նք են անոնք՝ որ այս զա
ղեր նախատանցը արժանի են թախաներ եղած
են, որո՞նք են արդեօք՝ սա Հայաստանը երեսի
վը այ թողով պանդխտութեան մէջ թափառող
խեղճ և թշուառ Հայերն են: Անոնք, որ ան
թիւ զբաւնաց ենթակայ եղած կտոր մը հացի
և ստակի համար իրենց ընտանիքը երեսի վրայ
թողով կուգան հոս, և անտարադրելի թշուա
ռութեամբ կը վատեն իրենց ժամանակը, կը
մոռնան բնութեան իրենց պարզեալ երանու
թիւնները, և դժնդակ աշխատութեանց և նե
ղութեանց ենթակայ լինելով՝ շատ անգամ կա
մաւոր զոհ կ'ըլլան իրենց անտանելի կեանքին:
Անոնք, որ Պօլսոյ Նկեղեցիները կը լեցնեն
առտու և երեկոյ, և իրենց սրտառուչ հառա
չանքներով և հեծեծանքներով Նկեղեցեաց
դմբեթները կը թնդացնեն, և Տաճարներուն
փախթները արատաւօք կը թանան: Անոնք՝ որ
Քրիստոսի սիրով բոլորեալ Սուրբ Պաշտա
մանց ներկայ դռնուելու միշտ կը տենջան: Կամ
անոնք, որ հազիւ դպրոցական կրթութիւն ա
ռած հանգարտութեամբ իրենց կենաց ասպա
րէզը կը լմնցնեն, և կրօնքին ուժով միայն կը
զմայլին: Աւ կամ ասոնցմէ ՚ի զատ անոնք, որ
իրենց բարոյականը բոլորովին խանդարած ամեն
տեսակ զաղազործութեանց զերի եղած՝ սա
կարճ կեանքերնին կանցնեն: Անոնք, որ չու
թեան, պոռնկութեան, գողութեան, զինե
մուրութեան մէջ թաւալելով՝ ուր երթալին չեն
զիտեր. է՛հ բաւ ասոնց մէջ կ'որոճանք, ՚ի զուր
ասոնց մէջ չեն անոնք, եւ թէ որքան սոսկալի է
ըսել որ անոնք սա նորելուկ եւ ինքնակոչ ու
սումնականներն են, որ աշխարհիս ներկայ լու
սաւորեալ մասը ինքզինքնին կը սեպեն, եւ ու

սուսնականութեան առաջին տիտղոսը ինքզինքնուն կը սեպհականեն . . . : Ա՛նչ, ի՞նչ դու ողբ թմամտութիւն եւ ամբարտաւան իմաստակութիւն . . . ցնորեալ հանձարեղէններ, եւ մերթ ծաղրելի, մերթ խղճալի արարածներ, ինքզինքնին Ազգային լուսաւորութեան կարգ դասողներ, եւ կրօնասէրները ծիծաղողներ, Քրիստոնէական սիրոյ օտարացեալ ոգիներ, կենաց ճամբուն մէջ ինքզինքնին բանի մը տեղ դնողներ, « Սկիզբն իմաստութեան երկիր-ը Տեառն է » պատգամը չի յարգողներ. եւ վերջապէս Քրիստոնէական կրօնքը ծաղրողներ, (առհասարակ չեմք խօսիր), եւ իրենց այս գայթակղելի ընթացքովը խելճ հասարակութիւնը թունաւորողներ . . . : Ահա ասոնք են պարզապէս ճշմարիտ Հայութեան թշնամեաց երրորդ եւ ամենազարհուրելի թշնամիները, որոնք խղճմտանքնին բխցուցած Ազգային իրենց իշխանութեան . . . : Եւ յայտնապէս կը յայտնեն թէ « ասոնք ինչ որ ասոնք ինչ » : Իրենց այս ընթացքը դադարի չէ, եւ իրենց բացարձակ ջանքն է կարելի եղածին չափ նախապաշարեալ ցրցունելու այն անձինքը՝ որոնք Ազգին հետ ի միասին կը պաշտպանեն, կը յարգեն եւ կը սիրեն կրօնքը, եւ կը տենջան որ Ազգը իր Լուսաւորչական (Աւաքերական) դաւանութիւնը պահէ : Ետնք լուսաւորեալներ են, բայց նախնեաց անարդարութիւնները կործանելու չափ լուսաւորեալներ, Ահեղեցական արարողութեանց շատ մասերը բժանջելու չափ լուսաւորեալներ են . . . : Ահա իրենց արտաքին յատկութիւնները, իսկ ներքին յատկութիւննին . . . : Ե՛հ անստորագրելի վատթարութեան սեւաւ ուրացութիւնը հոն է, Արօնք, Սուրբ Գլխը, Քրիստոնէութիւն, անմահութիւն, յաւիտենականութիւն, հանգերձեալ կեանք, եւ ոմանք ալ Երկինքը աւարիչ Եստուած մը ըլլալը չեն ուզեր ընդունիլ, եւ ամբարիշտին պէս իրենց սրտին մէջէն կ'ըսեն « ոչ գոյ Եստուած » :

* Հաւանական է որ բարեմիտ ընթերցող մը մեր այս պարբերութեանը հասարակ ջրեմայեալ ըլլայ, խորհելով որ մեր Ազգին մէջ բնաւ չի գտնուիր սուկրօն մը, անաստուած մը, կամ աստուածեանմը, բայց մենք կ'ըսեմք, կը սխալի այսպէս կարծելովը, ըստ որում մենք շատ անակնբերու հանդիպեցանք, որոնք գրեթէ բացարձակ կերպով կը պաշտպանէին միեւնոս անգամ անաստուածութիւնը, եւ ծաղր կընէին Քրիստոնէական կրօնքը, բայց երբ պահանջուի պատճառը գիտնալ թէ ինչո՞ւ այն անձինքնք իրենց

Ահա ասոնց հետ ի՞նչպէս խօսելու է, ինքնահաւանութեան ըստմենի ախտովը ախտացեալ պինդ գլուխներու հետ ի՞նչպէս վարուելու է :

Ազգին մեծ վնաս եւ նախատինք հասցուցած ասոնքնին՝ Ազգասիրութիւնը ուրիշ չի տուողներու ի՞նչ ըսելու . . . : Ե՛հ ի՞նչ ըսելու է որ սթափին, արթննան, եւ իրենց երազներով եւ երեւակայութիւններով յափշտակեալ մտքերնին տուն կանչեն : Իրենց փոքրեկեայ բարձրացած գահերնուն մի միայն ցնորք ըլլալը տեսնեն, իրենց անպիտանականութիւնը եւ ապիւրատութիւնը ստուգեն, անհարկին կուրութեան մասնուած լինելնին գիտնան, եւ իրենց դատապարտելի կայութիւնը եւ ընթացքը քննելով ամրանան : Եւ այնպէս ետ դառնան իրենց կորստական ճամբէն, աճապարեն Գողգոթայ լեռն ելլելու՝ ուսկից այժմ օտարացեալ են, եւ հոն Քրիստոսի փրկարար Խաչին տակ իյնան : Ա՛յր ջապէս ի՞նչ ընելու է որ ճանչնան սխալումնին եւ յարգեն իրենց Լուսնեաց Քրիստոնէական Արօնքը, որ է մի միայն շաւիղ Երանութեան, ըսպելանի վշտաց եւ միսթարութիւն մարդկային անկեալ սեռին :

Չեւուրներս կը դողդայ, եւ կարծես թէ՛ իմ ե գլխը ճշմարտութեանս վրայ՝ իմ մտադրութիւնս կը հրաւիրէ . . . : Եւ խորհիլ կուտայ ինձ թէ՛ սա անհուն տարածութեան մէջ փայլող աշխարհքները ո՞վ ստեղծեց : Խորհիլ կուտայ ինձ թէ՛ անոնց եւ ամեն բանի Երարիչը բոլոր այն անասանմանութեան մէջ ինչ փառք ունի, եթէ ես պիտի ոչնչանամ, չէ՞ որ իմ ոչնչութիւնս իր փառքը կը նսեմացնէ, եւ գոյութիւնս զենքը կը փառաւորէ : Խորհիլ կուտայ ինձ որ եթէ սա տարբերքները իրենց վախճանին հասնին եւ ամեն բան ոչնչանայ (Ես ալ) Երարիչը ասանձին ոչնչութեան մէջ իր այսքան սքանչելիքներուն համար դիմէ պիտի գովաբանուի . . . : Եւ թէ ոչնչութիւնը զայն պիտի գովաբանէ : Բայց այս զինքը յաւիտեան գովաբանելու տենչանքը

զաղափարները յայտնապէս ամեն տեղ զեն բարոյգիր կը պատասխանեմք, որովհետեւ իրենք ալ գիտեն թէ՛ այս ժամանակիս մէջ որքան ընդունեալ թիւն պիտի գտնեն իրենց զաղափարները, եւ թէ իրենք որքան խեղացնուեալ պիտի երեւան ամենուրեք, եւ միանգամայն ատելի, ուստի հարկ եւ պատշաճ է իրենց որ լուս կենան, եւ նային որ ժամ մը առաջ իրենց յիմարութեան ետ դառնան, եւ ըլլան « Բարի Մարդ եւ Բարի Քրիստոնեայ » :

Անցելի Մեղու և խորհէ մէյմը որ եթէ
դու Ազգիդ ամենաօգտակար անդամներուն
դէմ արայես կը վարուիս և զանոնք կը վշտացը-
նես նէ ի՛նչ երեսով կ'ընաս Ազգասէր ճանչցուե-
լու փափաքիլ, 'ի սէրն իրաւանց Պարոն Մե-
ղու բռէ, Ազգիդ մօր մասը կը սիրես, Խմբա-
գիրները կ'ատես, դասատուները կ'անարգես,
կրօնաւորները կը բամբասես, ասիկաները կը

“Չ-րդ լրաց կանգնող ճարտարին կը նայէ” (անդ) աս
 ի՞նչ լեզուէ է, “կեց-ն-նինն չի պանող” (անդ) “Եւ
 մանա Գովգուս” (անդ) “Եւ յաւալի” (անդ) “Եւ
 խորհի վաճառականն մարտադարէն” (անդ) “Եւ
 անհարկն ոչե-

Մեղու ըսելը Ազգ ըսել է, և թող վստահին որ ամեն ճշմարիտ Հայ և ճշմարիտ Ազգասեր գոհ են յիշեալ Տեղաբնակին հրատարակմանէն, չնորհակալ լինելով միանգամայն Չեր Ազգասիրութեանէն, եւ նորին Հեղինակ Յարգոյ Արապետ աղան Փառասանէն: Ուստի եւ կը յուսամք որ թէ դուք եւ թէ հեղինակը բանի տեղ չի դնելով (ինչպէս իրօք ալ լսեցինք այս մասին ձեր մեծանձնութիւնը), Մեղուն ըրած այս կոպտութիւնը՝ պիտի շարունակէք ձեր գովելի եւ ազգօգուտ ընթացքը՝ ի միեկտեղութիւն ամեն ճշմարիտ Հայրենասիրաց եւ Ազգասիրաց:

Թագաւոր լինել փափաքիլը թագաւոր լինել է, տոյնպէս ալ խմբագիր լինել փափաքելը խմբագիր լինել է: Մեղուն որ շատ կը փափագի խմբագիր մը լինելու, սրտի ցաւօք կիւ մացունեմք որ ինք այս մասին մեծ անյարմարութիւն ունի: Ըստ որում խմբագրութեան որչափ որ պարտականութիւնները՝ նոյնչափ ալ յարգը չի գիտեր: Այս բաժնիս բոլորովին յայտնի է իւր մինչև ցարդ ունեցած վարմունքէն: Գոր փոխանակ պատիւ բերելու խմբագրութեան՝ յամենայնի նախատինք եղած է յիշեալ փափակ պաշտօնին, ըստ որում Մեղուն չի կրնար համոզուիլ թէ պօռնալով, կանչուք տեղով, բոկտուելով, ծաղրելով, քաշելով, քաշկռտելով Ազգի և մարդկային ընկերութեանց օգուտաւ խմբագիր մը չի կրնար ըլլալ: Մեղի այնպէս թուի թէ՝ ինք աւելի խեղճատակաբանութեան մէջ յառաջանալու փափագ ունի, քան թէ Ազգին օգտակար խմբագիր մը կամ անդամ մը լինելու: Ուրեմն եթէ այս խրատը իրեն կ'ազդէ՝ Աստուած բարի ճանապարհ տայ, միայն թէ (Մեղուն) թող երբեք չի կարծէ որ՝ որ և իցէ խոհական անձ մը կրնայ զինք Ազգասեր և Ազգօգուտ մէկը ճանչնալ:

Արմենակ 4. Զիգմենեան:

Հեռուեալ ճառը՝ որ անցեալները Էյուպի Ս. Աղիա եկեղեցւոյ դպրոցին հնգամեայ հարցաքննութեան ժամանակ, նոյն դպրոցի յառաջադէմ աշակերտներէն տասն և երեք տարեկան տղու մը մոքին ծնունդը ըլլալով՝ նոյն ինքն ներկայ հանդիսականաց առջին համարձակ խօսերէ եղեր: Արդ՝ այժմ՝ ըստ խնդրանաց և փափազանաց նորին ծնողաց՝ արժան կը համարուիք զայն օրագրոյս միջոցաւ ամբողջ հրատարակելու:

Արժանապատիւ Տեղաբ. և Արդոյ խնամակալը: Սյոսր՝ որ Ազգասիրական ոգւով վառեալ մեղ համբակաց ուսմանցը քննութեանը զբաղելու բարեհաճեցաք՝ երջանիկ կը համարիմք մեք դմեզ: Ինչու որ՝ Չեր Ազգասիրութեանը այս սիրայօդ միաբանութիւնը՝ մեղի քաջալերութիւն մը կուտայ եւ կը խրախուսէ զմեզ՝ աւելի ուսման ասպարէզը վազելու: Եւ միանգամայն արթնութիւն մը կը ձգէ մեր ոգւոյն մէջ՝ որ ժամանակ ժամանակ այսպիսի օգտաւէտ հանգէմներու պատրաստ դանուինք:

Որովհետեւ դպրոցիս գործերուն շարունակութիւնը՝ անօգուտ չաղիարարութիւններու պատճառաւ մէկ ընթացքի վրայ չի մնալով՝ ձեռքերնիս գիրկերնիս մնացած՝ մտատանջութեան մէջ ընկզմած էինք: այլ փառք նախադասմանութեան Աստուծոյ, որ հիմակու հիմա դպրոցիս անդորրութեամբը՝ ուսման սիրոյն կայծը սրտերնիս մտաւ: Եւ հինգ ամիսը չի լըրացած ընթացքին շարունակութեամբը՝ այս հանդէպին ներկայանալովնիս՝ յոյս ունիմք Աստուծով՝ որ Չեր բարեխնամ անօրէնութեամբը՝ նոյն կայծերնիս բորբոքելով՝ մեծամեծ ճառագայթներ կարծարեմք: յօգուտ մեզ՝ եւ ի պարձանք Ազգայնոց Չերայնոց բարեխանան խնամակալաց եւ մեր գորովագութ ծրնողաց:

Եւ որովհետեւ յայտնի է որ նորածին թռչունները տկարութիւն կուենան թռչելու, մինչեւ որ մայրերնին քաջալերութիւն տայ անոնց եւ վարժեցնէ, մեք եւս մեր տկար թեւովը ուժ չենք ունենար ուսման մէջ ստանալու մինչեւ չը քաջալերուինք եւ չը դժբանք: Բայց այս դժբանք ինչո՞վ պիտի կարենանք ձեռք ձգել: Վարժարարաւորով, ոչ վստայի անհիկայ որչափ որ տքնի տակաւին անոր տքնութիւնը եւ մեր աշխատութիւնը դպրոցիս չորս պատին մէջը մնալովը ձեզմէ ալ անձանթ ըլլալով առ ևս տուր չուենցող վաճառականներու կը նմանի, որ առաւօտանց մինչեւ իրիկուն իրենց խանութը նստած վաճառքներուն երեսը կը նային: Վաճառքներն ալ գիտես թէ արտում տխուր անոնց երեսը կը նային: ո՛չ առնող կայ ոչ ծախող: Ուստի ինչո՞վ ուժ պիտի առնուիք, մեր ջանքովը: այս ալ անկարելի է վստայի ձեր աղիւտութեանը այս ալ յայտնի է որ աշակերտ մը որչափ որ ուսումնասիր ըլլայ մինչեւ որ զինքը գրգռ պիտի խայթոյ մը չուենայ չի կրնար ջերմ սրտով հեռուիլ իր ուսմանը մէջ: Այլ մեր ուժը մեր դժբանք մեր քաջալերութիւնը մինակ Չեր Ազգասիրութեան ետանդն է: որ մեզ կը զրգէ առ լաւութիւնս, առ պարկեշտութիւնըս եւ առ ուսմունս:

Մենք որ մինչեւ ցարդ տղայութեան անշահ հեռութիւնը մեղի ընկեր առած ենք Չեր նոյն Ազգասիրական ոգիէն շարժելով պիտի պատկառինք, զգոյշ կենանք, եւ բարի վարք ունենանք:

